ՀՏԴ 82.09(479.25) Գրականագիտություն

ԾԵՐԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ – ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հասմիկ ԲԱԲԱՅԱՆ

Բանալի բառեր՝ Ծերենց, պատմավեպ, գրականություն, մամուլ, հրապարակախոսություն, արևմտահայություն, հեղափոխություն, ազատագրում, ազգային, ժողովուրդ:
Ключевые слова: *Церенц, исторический роман, литература, пресса, публицист, освобождение, национальный, народ.*
Key words: *Tserents, historical novel, literature, press, publicist, revolution, liberation, national, people.*

А.Бабаян
Литературно-общественная деятельность Церенца

Известный армянский писатель, основоположник армянской историко-романтической повести, общественный деятель, публицист Церенц посвятил борьбе с отсталостью в Турции 40 лет, продвигая европейское просвещение. Романы Церенца вдохновляли армянский народ идеями национального освобождения в течение многих лет.

Церенц был одним из тех представителей армянской литературы, которые оставили яркий след в духовной культуре нашего народа. За пятьдесят лет литературной и общественной деятельности, он стал одним из незаменимых фигур в армянской литературе.

Результатом его художественной и литературной деятельности конца 70-х годов 19-го века стали три его романа: "Левон Торос", "В муках рождения" и "Теодорос Рштуни", вошедшие в анналы классической армянской литературы.

H.Babayan
The Literary and Public Activities of Tserents

The Armenian famous writer, the founder of Armenian historical and romantic novel, the public figure, the publicist Tserents 40 years of his life devoted to the fight against the backwardness in Turkey, promoting the European enlightenment. Tserents' novels inspired ideas of national liberation of the Armenians for many years.

Tserents was one of the representatives of the Armenian literature, who left his step on the spiritual culture of our people. He became one of the irreplaceable figures for his literary and public efforts which lasted for fifty years.

Three of his novels:"Levon Toros", «In the Pains of Birth" and "Theodoros Rshtuni" became the result of his artistic and literary activities at the end of the 70s of the 19th century: These novels set the writer among the classic Armenian authors.

Հայ ականավոր գրող, պատմառոմանտիկական վեպի հիմնադիր, հասարակական գործիչ, հրապարակախոս Ծերենցը շուրջ 40 տարի անձնվիրաբար պայքարել է Թուրքիայում տիրող հետամնացության դեմ, պրոպագանդել եվրոպական լուսավորություն: Ծերենցի վեպերը ազգային ազատագրության ոգեշունչ գաղափարներով տասնամյակներ շարունակ խանդավառել են ժողովրդի միտքն ու զգացմունքները:

Ծերենցը հայ գրականության այն ներկայացուցիչներից էր, որը մոտ հիսուն տարվա գրական-հասարակական իր ջանադիր գործունեությամբ անմար հետք թողեց մեր ժողովրդի հոգևոր մշակույթի ասպարեզում՝ դառնալով հայ գրականության, որոշ իմաստով, անփոխարինելի դեմքերից մեկը:

19-րդ դարի 70-ական թվականների վերջերից սկսված գրական-գեղարվեստական գործունեության արգասիքը հանդիսացան նրա երեք պատմավեպերը՝ «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» խորագրերով, որոնք գրողին դասեցին հայ նշանավոր հեղինակների շարքը:

Ծերենցի վեպերը ազգային ազատագրության ոգեշունչ գաղափարներով տասնամյակներ շարունակ խանդավառել են ժողովրդի միտքն ու զգացմունքները:

Ծերենցը հայ գրականության այն ներկայացուցիչներից էր, որը մոտ հիսուն տարվա գրական-հասարակական իր ջանադիր գործունեությամբ խոր հետք թողեց մեր ժողովրդի մշակույթի ասպարեզում՝ դառնալով հայ գրականության, որոշ իմաստով, անփոխարինելի դեմքերից մեկը:

Հայ նշանավոր վիպասան, հրապարակախոս Հովսեփ Շիշմանյանը, իսկ 1872 թվականից սկսած՝ Ծերենցը, ծնվել է 1822 թվականի սեպտեմբերի 16-ին Կ.Պոլսում: Նա շատ վաղ է կորցրել իր ծնողներին, մորը՝ երբ ընդամենը երեք տարեկան էր, իսկ հորը՝ տասնմեկ տարեկան հասակում: Մեկ տարի Կ. Պոլսի Միջագյուղի վարժարանում սովորելուց հետո 1831-ին նրան ուղարկել են Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ ուսանելու:

1837-ին Ծերենցը վերադառնում է Կ.Պոլիս և ուսումը շարունակելու անհաջող փորձից հետո չնչին վարձատրությամբ ընդունվում է դեղագործի աշակերտ:

Նրա երիտասարդությունը համընկնում է արևմտահայ իրականության մեջ ծավալվող ազգային զարթոնքի բուռն իրադարձություններին: Արմատական փոփոխություններ են տեղի ունենում հասարակական գիտակցության բնագավառում: Ծավալված լեզվապայքարում աշխարհաբարը վերջնականապես հաստատում է իր գոյության ու զարգացման իրավունքը: Մեծ թափ են ստանում մամուլը, հայրենասիրական դրամատուրգիան, թատրոնը, գրականությունը: Հասարակական կյանքում ձևավորվում են հակոտնյա՝ առաջադիմական և հետադիմական դիրքորոշումներ ու խմբակցություններ: Կազմակերպվում են ընկերություններ:

1848 թվականի սկզբներին բժշկություն ուսանելու նպատակով Ծերենցը մեկնում է Փարիզ, ընդունվում Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետը, միաժամանակ դասավանդում Մուրադ-Ռափայելյան վարժարանում: Նույն թվի Ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը, իտալական ազգային–ազատագրական շարժումները մեծ ազդեցություն են ունենում Ծերենցի լուսավորական աշխարհայացքի վրա: 1849-ին Ն. Ռուսինյանի, Ծերենցի և այլոց ջանքերով Փարիզում կազմակերպվում է «Արարատյան ընկերություն»–ը, իսկ ատենադպիրի պաշտոնը ստանձնում է Ծերենցը:

1852 թվականին ավարտում է Պիզայի համալսարանը, 1853 թվականին վերադառնում Կոստանդնուպոլիս, հանդես գալիս կրթադաստիարակչական բնույթի հրապարակախոսական հոդվածներով, մասնակցում ազգային սահմանադրության մշակմանը, պայքարում դավանաբանական վեճերի դեմ, դառնում հակահասունյան շարժման պարագլուխ: 1860–ական թթ. սկզբերին, լինելով Պոլսում կազմակերպված «Բարեգործության ընկերության» հիմնադիրներից մեկը, զբաղվում է հայ ժողովրդի ազատագրական շարժման հարցերով, հարում Սվաճյան–Նալբանդյան խմբին: Զեյթունի ապստամբության նախօրեին մեկնում է Կիլիկիա, հալածվում քաղաքական գործնուեության համար:

1860 թ. մայիսի 24-ին Կ. Պոլսի ազգային ժողովն ընդունում է արևմտահայության ներքին կյանքը կարգավորելուն կոչված Ազգային սահմանադրությունը (սուլթանական կառավարությունը այն վավերացրեց 1863թ. մարտի 17-ին): Չնայած դրանով նախատեսված խիստ սահմանափակ իրավունքներին այն որոշակի աշխուժություն մտցրեց ազգային կյանքում:

1866թ. սեպտեմբերի 1-ին Մ. Պեշիկթաշլյանի, Ծերենցի, Ս. Թագվորյանի և այլոց գործուն մասնակցությամբ Կ. Պոլսում հիմնադրվում է «Բարեգործական ընկերություն հայոց» կազմակերպությունը, որը մինչ այդ ստեղծվածներից անմենաարմատականն էր:

1872 թվականից ազգային կյանքին նվիրված հոդվածներով աշխատակցել է Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլ» հանդեսին: Ենթարկվելով նոր հալածանքների՝ 1876-ին բժշկի պաշտոնով մեկնել է Կիպրոս:

Այդ շրջանում նա եղել է Վանում, Ալաշկերտում, Բասենում և այլուր, բժշկական օգնություն ցուցաբերել բնակչությանը: Կյանքի վերջին տարիներին Ծերենցն ապրել է Թիֆլիսում[1]:

1870-ական թվականների առաջին կեսին թուրքական դիվանագիտությունը եվրոպական մեծ երկրների, հատկապես Անգլիայի աջակցությամբ հայերի նկատմամբ վարում է երկակի քաղաքականություն[2]:

[1] Ծերենց, Երկեր, Եր., Սովետ, գրող, 1985, 640 էջ, էջ 7:
[2] Նույն տեղում, էջ 11:

Ծերենցն անդրադառնում է եվրոպական մեծ պետությունների կողմից սեփական շահերի համար հորինված «Արևելյան հարցին»: Ծերենցի դիտողություններն ու եզրակացությունները հավաստում են նրա քաղաքական սրատեսությունը:

Սակայն կային նաև քաղաքական բնույթի հեռանկարային նպատակադրումներ՝ մասնավորապես կապված Կիլիկիայի հետ: Բոլորովին պատահական չէր, որ, ելնելով իր փորձից, Կիլիկիայի պատմության ու արդիականության նկատմամբ ունեցած տևական հետաքրքրությունից, իտալական ու բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի վերելքից, Ծերենցը ստեղծում է իր «Թորոս Լևոնի» վեպը: Միանգամայն իրավացի էր Ստ. Պալասանյանը, որը Գրիծ ստորագրությամբ Ծերենցի վեպին նվիրված գրախոսությունում գրում էր. «Քիչ գիրք կպատահի, որ «Թորոս Լևոնիի» նման յուր ժամանակին գրված ու հրատարակված լինի»[1]:

Անձամբ ականատես ու մասնակից լինելով 1848 թ. ֆրանսիական փետրվարյան հեղափոխությանը, իսկ ընդհանուր առմամբ՝ ապրելով ու գործելով հասարակական-քաղաքական տեսակետից բուռն դեպքերով առլեցուն մի ժամանակաշրջանում (1839 թ. սուլթանի Խաթթի շերիֆը, 1853 թ. ռուս-թուրքական պատերազմը, 1853 թ. Ղրիմի պատերազմը, 1856 թ. սուլթանի Խաթթի հումայունը, 1860 թ. ազգային սահմանադրությանը և այլն), Ծերենցը իր ժողովրդի ու նրա մոտալուտ ու հեռավոր գալիքի համար մշակեց կայուն ու հետևողական աշխարհայացքային մի պլան: Ճիշտ է, հակասական և որոշ դեպքերում ուղղակի սխալներով լի էր այն, որ հիմնականում կապվում էր «վերևից հեղափոխություն» անելու երազանքի հետ, բայց նա այդ պլանը դարձրեց իր հրապարակախոսական գործունեության առանցքը: Հայ ժողովրդի փրկությունը նա նախ և առաջ տեսնում էր թուրքական ռազմաֆեոդալական բռնապետությունից ազատվելու մեջ, անագորույն մի բռնապետություն, որը ծանր մամլիչի նման ճնշում էր ոչ իսլամ ժողովուրդներին, մեռցնում նրանց հոգևոր կարողությունները: Ազատագրվելու այս գաղափարախոսության հետ Ծերենցը սերտորեն համակցում էր նաև մի ուրիշ կարևոր պահանջ՝ ազգային լուսավորության, կրթության, եվրոպական ոգով դաստիարակության և առաջադիմության պահանջը: Իրավացի էր Մատթեոս Մամուրյանը, որը, խոսելով Ծերենցի՝ այս շրջանի գործունեության մասին, նշում էր, որ վերջինս «Շատ նիզակներ կոտրած է գրական մենամարտերուն մեջ»[2]:

Հրապարակախոսական գործունեության շարունակությունն ու մի տեսակ ամբողջացումը հանդիսացավ Ծերենցի գրական-գեղարվեստական գործունեությունը, որով նա սկսեց զբաղվել 19-րդ դարի 70-ական թվականների վերջերից: Իրար հետևից ասպարեզ են գալիս նրա երեք պատմավեպերը՝ «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» խորագրերով, որոնք գրողին մշտական տեղ ապահովեցին հայ դասական հեղինակների շարքերում: Պատմավեպի ժանրին անցնելն ուներ իր հետևյալ՝ ներքին հիմնավոր պատճառաբանությունը: 70-80-ական թվականներին տեղի ունեցած հասարակական-քաղաքական դեպքերը, առանձնապես 1877 թ. ռուս-թուրքական պատերազմը և անմիջապես դրան հաջորդած Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը իր համբավավոր 16-րդ հոդվածով նորից վառ հույսեր ներշնչեցին հայ ժողովրդին, որ մոտենում է թուրքական բռնապետությունից ազատվելու բաղձալի պահը: Ուստի հարկավոր էր ոգևորել հայ ժողովրդին այդ հեռանկարով, նրա մեջ վառ պահել ազատատենչության ոգին: Իսկ մինչև վերջ ընթերցողների սեփականությունը դառնալու, լիուլի հասկացվելու համար անհրաժեշտ էր հրաժարվել «հնօրյա հանդերձից»՝ խրթին գրաբարից, որն ավելի ու ավելի էր կտրվում ժողովրդական լայն մասսաներից, և գրել ամենքին մատչելի աշխարհաբարով:

[1] «Փորձ», 1879, №2, էջ 135-136:

[2] Սովետական Հայաստան, 1963, № 52:

Նրա առաջին վեպում՝ «Թորոս Լևոնի»-ում (1877թ.), պատկերում է Կիլիկիայի պատմական իրադարձությունները՝ քննադատելով հայ ֆեոդալների կենտրոնախույս ձգտումները:

1879 թվականին Ծերենցը հրատարակում է «Երկունք Թ դարու» պատմական վեպը: Հայրենիքի ազատագրման համար արաբական խալիֆայության դեմ հանդես է գալիս «ժողովրդի մարդը»՝ Խութեցի Հովնանը: Նա ոտքի է հանում ժողովրդին՝ վերականգնելու Բագրատունյաց պետականությունը:

1881 թվականին լույս է տեսնում «Թեոդորոս Ռշտունի» վեպը: Վեպի թեման վերցված է 7-րդ դարում Հայաստանում տեղի ունեցած պատմական իրադարձություններից: Ներկայացնելով Բյուզանդիայի և Պարսից /այնուհետև արաբական/ պատերազմների թատերաբեմ դարձած Հայաստանի ծանր վիճակը՝ Ծերենցը ժողովրդին կոչ է անում դուրս գալ ընդդեմ բռնակալների[1]:

Ստեղծագործության նյութ դարձնելով Կիլիկիայի հայոց պատմական անցյալը՝ հայ-բյուզանդական պատերազմները, Ծերենցը այդ հենքի վրա պատկերել է դյուցազուն Թորոսի սխրանքներն իր հայրենիքը փրկելու համար: Այդ անելու համար Թորոսը ստիպված է լինում ոչ միայն գործ ունենալ «խարդախ ու նենգավոր» Բյուզանդիոնի, այլև Իկոնիայի, Զինգի, Եգիպտական սուլթանի և մի քանի այլ պետությունների ներկայացուցիչների հետ: Հեղինակը, շեշտելով հանդերձ իր հերոսի մարտավարական, ռազմագիտական մեծ ունակությունները՝ մեծ հաջողությամբ պատկերում է Թորոսին՝ որպես բանիմաց և մտացի դիվանագետի: Նա կարողանում է վարպետորեն լուծել Հայաստանի հարևան պետությունների, ներքին կենտրոնախույս իշխանների հետ առնչվող դիվանագիտական բազմաթիվ կնճռոտ ու խճճված հարցերը, մի անգամ ևս դրսևորելով իր հարուստ տվյալները այդ ասպարեզում: Ի հակադրություն իր եղբոր՝ կնաբարո և ծանծաղամիտ Մլեհի, Թորոսի մոտ շեշտված են կազմակերպչական մեծ կարողությունները, ղեկավարի խորաթափանցությունը, ջերմ հայրենասերի կրքոտ ոգին: Այս ամենի հետևանքով վեպի վերջում հառնում է Թորոսի այնպիսի ամբողջացված ու լիարյուն կերպար, որի կերտումը կարելի է համարել հեղինակի ստեղծագործական նվաճումներից մեկը: «Երկունք Թ դարու» պատմավեպը, որը հանդես եկավ նախորդից մոտ երկու տարի անց՝ 1879թ., հանդիսացավ Ծերենցի գեղարվեստական ստեղծագործության բարձրակետը: Նյութը դարձյալ պատմական է և նվիրված 840-ական թվականներին դեպի Հայաստան արաբների նախաձեռնած արյունալի արշավանքներին և հայ ժողովրդի ընդվզումին 200-ամյա լծի դեմ: «Երկունք Թ դարուն» այս տեսակետից կարող է դիմանալ ամենախիստ ու պահանջկոտ քննության: Հակադրվելով մեր պատմության մեջ տարածված և պատմավիպասանների կողմից օրինականացված այն սովորույթին, որ պատմության հերոսները կարող են լինել միայն «արք մեծամեծք և իշխանականք», Ծերենցն առաջին անգամ կերտեց հասարակ շինականի հմայիչ կերպարը: Վեպի կենտրոնական հերոսը խութեցի Հովնանն է, պարզամիտ ու նահապետական այդ գյուղացին, որը կարողանում է ոտքի հանել հայ ժողովրդին արաբական ճնշողների դեմ ու համոզիչ հաղթանակի հասնել: Վճռականորեն շրջվելով ազնվականությունից, համարելով նրանց «բազմագլխյան վիշապ», Ծերենցը դեմքով դառնում է դեպի հասարակ ժողովուրդը՝ նրա հետ կապելով փրկության և լավ ապագայի բոլոր գեղեցիկ հույսերը: Այս տեսակետից հատկանշական են քրմուհու խոսքերը, ուր հստակ երևում է հեղինակի պատմահայեցողությունը: Հասկանալի է, որ այս տեսանկյունով գրված վեպում ժողովրդական առաջնորդի՝ Հովնանի կերպարը պետք է լիներ և իրոք եղել է լավագույններից մեկը: Խենթ ու խիզախ, բայց՝ կշռադատող և հաշվենկատ, անշահախնդիր, բայց շահագետ և զգույշ, մարդասեր, բայց հայրենադավներին անխնա պատժող, խիստ ու խոժոռ, բայց՝ նուրբ և փխրուն սրտի տեր. այսպիսին է ընդհանուր գծերով Ծերենցի կերտած «ժողովրդյան մարդը»: Վեպն ավարտվում է բազմանշանակ «Երկունք» վերնագիրն ունեցող լավատեսական մի վերջաբանով: Անհավասար կռվում հաղթում է հայ ժողովուրդը, և այդ հաղթանակի արտահայտությունը լինում է ինքնուրույն պետականության հաստատումը: Ծերենցի երրորդ՝ «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպը, որի նյութը վերցված է յոթերորդ դարի

[1]Ծերենց, Երկեր, (Տեքստը կազմ.՝ Ռ. Գ. Սարգսյան), Եր., Սովետ, գրող, 1985, 640 էջ, էջ 13:

Հայաստանի պատմական իրականությունից: Ծերենցն այստեղ ամփոփում է իր մտորումները հայկական ավատատիրական իրականության մասին և հայ ժողովրդի փրկության միակ ճշմարտացի ուղին տեսնում է լուսավորության մեջ, մի գաղափար, որն, ի դեպ, նա բազմիցս արծարծել է իր հրապարակախոսության մեջ: Այս է Ծերենցի գեղարվեստական ժառանգությունը:

1913 թ. մայիսի 26-ին Հայ գրողների ընկերությունը Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը Ծերենցի մահվան 25-ամյակի առթիվ կատարում է հոգեհանգստյան արարողություն: Թումանյանը խոսք է ասում, որ տպագրվում է Ծերենցի գերեզմանի վրա.

«Հայոց նորագույն գրականության պատմությունն ասում է՝ Ծերենցը եղավ մեր նոր պատմական վիպագրության հիմնադիրը: Եվ երբ ետ եք դառնում դեպի 60-ական թվականները՝ ճանաչելու՝ թե ո՞վ էր էդ հիմնադիր վարպետը— ձեր սիրտը լցվում է անկեղծ հրճվանքով: Չգիտեք՝ նրա ազատասեր ոգու վրա հիանաք, նրա վառ հայրենասիրության ու ժողովրդասիրության վրա զարմանաք, նրա հոգու ազնվության մաքրության վրա ուրախանաք, թե նրա սրտի քնքշության ու ճաշակի նրբության վրա:

Եվ ի՜նչ իմաստուն ու գեղեցիկ է դնում նա իր գործի հիմքը՝ իրեն հերոս առնելով Թորոս Լևոնին, բյուզանդական բանտում փակված հայ իշխանազնը, որ բանտից դուրս փախչելով, հասնում է իր հայրենիքը ազատասիրության շունչ է փչում, սիրտ տալիս, ոտքի է հանում իր ժողովրդին ու կանգնեցնում է ամուր՝ իր ազատ կյանքով ապրելու:

Էսպիսով նա հանդիսանում է մի խորհրդանշան _ հայ ժողովրդի ազատասիրության ոգին, մի ոգի, որ թագավորում է հայոց թե պատմական, թե ժամանակակից կյանքի վրա հիմնած գրականության մեջ և զորանում ու ամրանում է ժողովրդական ուժով՝ հերոսական խորհուրդներից հերոսներ ծնելով:

Հայոց Գրողների Ընկերությունը էսօր եկել է ծաղիկներով ու զարդարել Ծերենցի գերեզմանը նրա մահվան 25-ամյակի առիթով:

Սակայն էս ծաղիկները չնչին զարդեր են նրա մեծ շիրմի համար: Սրանց բոլոր արժանիքն էն է, որ մեր զգացմունքների արտահայտությունն են էսօր: Սրանցով չպիտի զարդարվի նրա շիրիմը, մի շիրիմ, որ զարդարված է տաղանդի, ժողովրդասիրության ու մաքրության անթառամ զարդերով, թե լավ գրողի, թե ազնիվ մարդու վսեմ առաքինություններով: Եվ մենք չենք եկել մեր հանդեսով ու ճառերով նրան բարձրացնելու, այլ եկել ենք՝ նրան հիշելով՝ նրանով բարձրանալու:

Եվ թո՛ղ օրհնված լինի նրանց հիշատակը, որոնք իրենց կենդանության օրով ժողովուրդներին կյանք և շունչ տալուց հետո էլ՝ չեն դադարում իրենց գործերով ու գերեզմաններով էլ ազնվացնելու և բարձրացնելու մարդկանց ու ժողովուրդներին:

Թող օրհնված լինի Ծերենցի հիշատակը»[1]:

1913

Տեղեկություններ հեղինակի մասին.

Հասմիկ Բաբայան -ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայ գրականության ամբիոնի հայցորդ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

[1] «Հորիզոն» թերթում, (1913, մայիսի 2, №115):